ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԷՍ ԱՐԱՇ

ՀԱՏՈՐ ԽԵ. ՊՐԱԿ Գ. 1887 ՅՈՒԼ. ԱՒԳՈՍՏ. ՍԵՊՏ.

ՀԱՆԴԷՍ ՀԱՅԿԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

Ի ԹԷՈԴՈՍԻՈՅ ԴԷՊ Ի ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ

Ժ

ՍՈՒՐԲ ԽԱՉ ՎԱՆՔ

(Տես էջ 116)

ՍՈՒՐԲ ԽԱՉ Նախիջևանու հիւսիսային կողմը, քաղաքէն եօթն վերստ հեռաւորութեամբ, ապառաժ լերին վրայ շինուած է. գիրքը վայելուչ է, այլ եկեղեցւոյն ճարտարապետութիւնը նոյն է՝ ինչոր ունին քաղաքին եկեղեցիք։ Սորա հիմը օրհնած է 1784ին Յովսէփ Արքեպիսկոպոսեանց. վանքը կամ առաջնորդարանն նոյն ապառաժին վրայ շինուած են, անշուք սենեկներով. ապառաժէն քաղցրահամ ջրոյ աղբիւր կը հոսի դէպ 'ի վար, ուր շինուած է ընդարձակ պարտէզ։ Վանքն ունեցել է ժամանակաւ կոկիկ մի հայ տպարան, ուր և տպուած են զանազան գրեանք. այժմ կարևորութիւն չկայ տպարանի. վասն զի Ռոստովի մէջ Պ. Յովհաննու Տէր — Աբրահամեան տպարանը իւր արագատիպ մեքենայիւք, նոյնպէս և Նախիջևանու մէջ Պ. Յարութեանը, կարող են տպել և հրատարակել արագապէս ամենայն հայ մտաց և գրչաց արտադրութիւնք։ Կայ այժմ վանքին մէջ դպրոց կամ կղերանոց, ուր քառասնիւ չափ աշակերտք, ընդ խնամով մեծա-

digitised by A.R.A.R.@

պատիւ վանահօր Տեառն Կիւրղի Սրապեան՝ կը վարէին հոգևորական կենաց միջոցները ուսանելով և աղգային դպրութեանց մէջ յառաջելով [1]։ Ապա ուսանողաց մանք բոլորովին հոգևորական կենաց կը նուիրեն զիրենք, և այլք Նախիջևանու կամ այլ եկեղեցեաց մէջ դպրաց պաշտօն կը վարեն։

Վանքիս եկեղեցւոյն մուտց անկողմեան պատին վրայ այս յիշատակարանը կարդացի. « Շնորհօքն Աստուծոյ կառուցի զՍուրբ Խաչ վանքս, 'ի սմա դդպրոց և զպատարան, ես Յովհաննէսի Արզութեանց Շիօշ — Բէկի որդի, և սուրբ Էջմիածնայն նուիրակ, Ռուսաց երկրի Հայոցս առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոս, 'ի կայսերութեան ամենայն Ռուսաց Եկատերինէ Ալէքսէյէվնայի երկրորդի, և 'ի Հայրապետութեան Հայոց Տեառն Ղուկասու, աշխատութեամբ հոգևոր որդւոյ իմոյ Բայազիտցի կարապետ վարդապետի։ Օծեալ եղև յամի Տեառն 1791 և 'ի Հայոց թուականի 1240, 'ի սեպտեմբերի »։ Այս յիշատակարանի մարմարիոնեայ քառակուսի քարը, ինչպէս կ'երևայ յետ 'ի հիմնոց նորոգութեան տաճարին՝ վերսին աքցուած են որմին մէջ. վասն զի այլ նոր յիշատակարան մի կը ծանուցանէ մեզ, թէ 1863ին « 'ի հիմանց նորոգեցաւ այս Սուրբ Խաչ եկեղեցին՝ յորդորանքք Գերպ. Տեառն Գաբրիելի Այվազեան, հոգաբարձութեամբ ՊՊ. Գէորգայ Խաթրանեան և Ալէքսանդրի Ալաճալեան »։

'ի նմանութիւն կամ լաւ ևս 'ի յիշատակ հին Ղրիմեցի Սուրբ Նշան վանքին չինած են Նախիջևանցիք այս նոր վանքը. այլ նախատիպը ոչ միայն իւր հընութեամբն՝ այլ և շատ մասամբ գերազոյն է քան զնորս։ Հնոյն վրայ մինչև ցայսօր յայտնի կ'երևայ հայկական ճարտարապետութեան ճաշակ, վեհութիւն, դեղեցկութիւն և ամրութիւն. մեով բանիւ՝ ազգային պատմութեան տեղեակ ճանապարհորդը չշարժելով կը նշմարէ, որ այդ վեց դարուց վանքին չինութեան վրայ աշխատած են զարարազդիկն Անի անմոռան դեղեցկութեամբ զարդարող քարակոփը։ Այլ մեր դառնալով այժմ դարձեալ Նախիջևանու Սուրբ Խաչին, Ղրիմեան Սուրբ Նշանի վրայ 'ի սորև խօսիլ կը խոստանանք։

Վանքի ընդարձակ պարտէզը՝ մի միայն ամառուան տարին ազատ չունչ առնելու տեղ է Նախիջևանցւոց համարանչուշ վանքին որբազան հիմնադիրն այդ նպատակաւ տնկել տուած է այդ պարտէզը, որպէս զի Ղրիմու հովասուն լերանց և անառաց սովոր ժողովուրդը հոս գալով՝ առնու կարօտը կորուսեալ հայրենեաց։ Սրբազան առաջնորդն իւր նպատակին հասած է, այլ իմ կարծեաց՝ Նախիջևանցիք անդր ևս անցած են հիմնադրին նպատակէն. զի Սուրբ Խաչ ոչ միայն Նախիջևանցւոց զբօսարան դարձուցեր են, այլ հասարակաց ճեմելեաց տեղի երկուց քաղաքաց՝ Նախիջևանու և Ռոստովի, ուր սահմանեալ օրեր՝ կու գան երեկոյին խառն բազմութիւն ազգայնոց և օտարաց, և մինչև ցկէս գիշեր կը զբօսնուն վանքին պարտիզին մէջ, անք և կանայք, ուր կը հնչեն պարք երաժշտաց։ Թէպէտ և ես անձամբ ականատես չեղայ այդ հանդիսից, այլ 'ի պարտիզին տեսած տախտակամած չէնքն յայտնի ապացոյց էին լսածներուս։ Կարող չեղայ մոռացս մէջ համաձայնելու այդ երկու հակասական իրքն. վանք՝ հոգևորականաց կրթութեան տեղի և միանգամայն հասարակաց զբօսարան։ Թէպէտ և եղան զրուցողներ որ վանքը այն առթիւ բառական չահ կը ստանայ, այլ ես զրուցեցի, (և միայն իրաւամբ կարծեմ և արդարութեամբ) թէ պէտք չէ այն չահը որ գալոց բարոյական վնասվնն լինի։ Կարելի է սպալիմ ընթերցողն կարող է դատաստան կարել։ Ընդհանրապէս Նախիջևանու Սուրբ Խաչը չունի

[1] Այս գպրոցս Մարգասիբական ընկերութեան ենամամ և նպատակաբ կը յառաջադիմի։ Այդ ընկերութիւնը իւր արդիւնքներով, որ տուած է անհանգ աշխատութեանց իմ ասպնջականի, Պ. Եպիփանու Պոլսոյեան։

digitised by A.R.A.R.@

վեմ կերպարանքը, ինչ որ կ'ընծայէ ցայսօր Սուրբ Նշան Ղրիմու, որոյ վրայ կ'արժէ համառօտիւ խօսիլ։

Ղրիմեցի վանքին հին կոչումը Սուրբ Նշան է, չինած յառաջին կէս ԺԴ դարու ՃՆՇՈՎՑՈՅ Ղրիմու տիրապետութեան միջոց, ոչ հեռի Սուրխատ քաղաքէն իւր անառաջին մէջը կազարտի կոչուած մեծ աւանին վրայ, ուր նստելով թեմական առաջնորդը, հինգ հարիւր տարուան միջոց կառավարել են թերակղզոյս հայասեռ ժողովուրդը։ Կազարտի մեծ աւանը ծուխ կամ վիճակ եղած է Սուրբ Նշանի, որոյ ցարդ մնացած քարուքանդ դերբուկները վրկայ են զրուցածիս։ Ցիշատակարան մի յանուանէ կը յիշէ հայաբնակ քաղաքներն և գեղերը, որք էին ընդ իշխանութեամբ Սուրբ Նշանի արքեպիսկոպոսին, և իրենց առատ տրովք վերանորոգել են զՍուրբ Նշան. ինչպէս հայասեռ ժողովուրդը « Կաֆայու, Ղարասույու, Պաղչասարայու, Կէօզլէվու բոլոր գիւղօրէիւքն, Հանդերձ Ղաչանաւն... 'ի ժամանակս առաջնորդութեան Ադամայ արքեպիսկոպոսի կըզզոյս »։ Ի Սուրբաթէ (Հին – Ղրիմէ) դէպ 'ի Սուտաղ գնալու անտառ ամէջ ճանապարհէն նայելով շատ գեղեցիկ է վանքիս գիրքը, որ հեռուն լերան վրայ, անտառախիտ ծառոց միջէն խորհրդական ձեւով յերևան կու գայ կըրկնայարկ վանքն, խաչապակ եկեղեցեաւն. վասն զի այժմ այդ երկու հասակառոյց շէնքն կանգուն մնացել են, իսկ յիշատակարանաց մէջ յիշուած այլ շինութիւնք կործանել են հողու հաւասար։ Անշուշտ ասկէ 300 տարի առաջ՝ երբ չէն էր վանքս, և բաց 'ի ներկայ շէնքերէս՝ կային այսդին և այնդին անտառին մէջ կրօնաւորաց խուցկներ, լերան դարանդին վրայ փորուած, և յորս նստած բարեպաշտիկ աբեղաներ՝ ամենայն խնամքով կը գրէին և կ'օրինակէին սուրբ աւետարաններ և այլ եկեղեցական գրեանք, ինչպէս կը գրէ 1347ին գրուած աւետարանի յիշատակարան մի. « Ի թիւ Հայոց ՉՂԶ » կատարեցաւ սուրբ մատեանս սա, » տուաձախուան աւետարանիս յաչ- » խարհս Հռնաց, որ այժմ Ղրիմ ասի, » 'ի մեծ և 'ի հոյակապ քաղաքն Սուր- » խատի կոչեցեալ, 'ի հողեմենալս վեր- » րի, առ ոտն Սուրբ խաչին, և այլն »։ Ես այնպէս կ'երևակայեմ որ այդ միջոցներուն աննման եղած ըլլայ հեռուէն Ս. Խաչի գիրքը, մանաւանդ գիւղերժամանակ, ուր բարձրագիր հողեմներէն շրջապատելով կանթեղաց լոյսը, ատաղերուն նման, կը յիշեցընէին հայ ճանապարհորդին թէ հոն հեռուն այդ ասեղներու առաջնատած հայ ճգնաւորներ՝ կը աքնին օրինակելու ատուաւժամսոյ պատգամները, մեզ 'ի ժառանգութիւն թողլու համար։

Թէպէտ հեռուէն տակաւին ևս կորուսած չէ Ս. Խաչ իւր վեմ և խորհրդաւոր տիպարը, այլ մօտէն աւանդելի վիճակի մէջ է։ Զկայ հոն այժմ վանահայր, միակ պահապան մի կը հսկէ, այն երբեմն փառատեսիլ վանքին տխրատեսիլ և ծեփաթափ որմոց վրայ, որոց ատուերին տակ կը հանդչին վանքին սրբասուն հիմնադրաց ոսկերք, դարևոր կնձնիք, կաղամախք, նշդարիք և հայելք հաստատեստ բանեալք, վրկայք անցեալ փառաց, կարծես այժմ կ'ողբան վանքին տմայութեան վրայ, երբ յանկարծ դերեզմնական լռութեան մէջ կը փչէ քամին։ Այլ երկին անապակ ջրերով յորդառատ լուսազբիւրք անտարբեր անցեալ և ներկայ վիճակի վանացս՝ իրենց սառնորակ ջրերով միակերպ կը հոսին։ Վանքիս արժանավայել գաղափար մի տալու համար ընթերցողաց, 'ի մէջ կը բերեմք ցակոբ վարդապետի կաֆայեցւոյ գրած տողերը, որ ունեցել է բաղդ ականատես վկայ լինելու վանքիս փառացն և ճոխութեան (1694)։

Կամաւ Սուրբ Հոգւոյն ամէն գէանական,
Յովհաննէս անուն՝ շնորհիւ պեսական.
Լեալ նա յաչխարհէն մեծ Սեբաստական,
Կանգնեալ հաւատով զվանքս Սուրբ Նշան։
Ունելով ընդ իւր զիայրն փերեչական,
Եկեալ 'ի յաչխարհս փառաջ մեծական,
Ամիսոփեալ զման խնամք տեառնական,

digitised by A.R.A.R.@

Վերահառուցեալ զվանքս Սուրբ Նշան...
Բամբ ժողովրդոց մեծ և փոքրկան,
Անչափ բարութեամբ առ 'ի քեզ ուխտ գան.
Հոգւովք և մարմնով ցնծան և խնդան.
Ապաւէն ազգիս ահեռս Սուրբ Նշան...
Արտաքոյ ներքոյ պատեալ ամրական,
Սրբասաստ քարիւք ես կամարական.
Մեծ կոթուղիկէ, տուն արքայական,
Ճեմեալ ճեմարան, Ճարտկ Սուրբ Նշան...
Ի միջի քում կան հաստատ բնակարան,
Թէ և կարգաւորք կամ աշխարհական
Փեղ ապաստարան միշտ ծառայական,
Ցիրոց. տենչալի տաճար Սուրբ Նշան։
Կարգաւ բոլորիս բաղում օթևան,
» Երթևեկողաց տեղ ապրնչական.
Դու 'ի ծոց նորին բազմեալ գովական
Հանգիստ հաճելի, հաստատ Սուրբ Նշան։
Ցարտ ես, և ոչ կայ քեզ նմանական,
Տեսօք և տեղեաւ յոյժ հիացական,
Ամենայն բարեաք լըցեալ լիսկան
Փառաք փառաւոր, փարթամ Սուրբ Նշան։
Ակնաթի և ոսկի անօթ ընտրական,
Բուրվառ և կանթեղ, խաչ, աւետարան,
Շուրջառ և վակաս, ուրար և բազպան,
Զանազան զարդիւք զեղուն Սուրբ Նշան...

Երկաս ապրերաք ջուր համեղական.
Ատուեալ են մայրաքդ զքեզ պարտական,
Կաս դու 'ի միջի պերճանով սեփական,
Կաքաւեալ կայթեան, կայան Սուրբ Նշան։
Ցանկան փափաքին ալիք ամենայն,
Մինչև այլազգիք առ տարս քո գան,
Մաքառա և պարոն համ Աղուզան և Խան,
Հիացեալ հային հիմանդ Սուրբ Նշան։

Թէպէտ և այժմ թափուր է Ս. Նըշան այն արժանեալ և ոսկեայ ընտրակաւն անօթներէն, այլ ունի մեծ գիւղեր, անտառներ և այգիներ, որք տարուէ տարի 6000 բուրլի եկամուտ կուբերեն. եթէ այդ հազարաց վեցին մին ամէն տարի այդ հին արքատեղւոյն վերայ ծախուի, թափած և փլած ժեփուի նորոգուի, դարձեալ կը շէնանայ Ս. խաչ, և ազգիս հին, փառաւորեալ, արքազան յիշատակը երթալով չի կործանիր։

Աւարտեն յառաջիկայս.

Հ. Քերոգրէ Վ. Քուշեներեան

Ա. Ռ. Ա. Կ

Գայլն և Ջորին և Աղուէսն եղեն եղբարք, և գնացին, և որս ոչ հանդիպեցաւ. յորժամքաղցեան, ասացին ընդ միմեանս, Թէ եկայք կերիցուք զայն՝ որ 'ի տարեց փոքր է. զի զՋորին կամէին ուտել։ Եւ ասացին ընդ Գայլն, Թէ Դու քանի՞ ամաց ես։ Ասէ Գայլն. Ես այն գայլն եմ, որ Նոյ 'ի տապանն էաւ։ Եւ ասէ Աղուէսն, Թէ Դու տան ազգով քան զիս փոքր ես. ես այն ագուէսն եմ, որ Աստուած ետուեալ զիս յառաջն. ես այն եմ։ Եւ Ջորին ասէ. Խմթաւեբրն 'ի սմբակս գրեալ է, կարդացող բերէք որ կարդոյ և գիտնայ Թէ քանի՞ ամաց եմ։ Աղուէսն ասէ ընդ Գայլն, Թէ Ես գիտեմ որ զքեզ 'ի դպրոց զրին ժամանակ մի. եկ կարդա զգիրս։ Եւ Գայլն հաւատաց և գնաց. և Ջորին զոտն 'ի վեր էառ, և նոր էր լուսնած։ Եւ և Գայլն գնաց 'ի տեսանել զգիրն, և ասէ Աղուէսն. Ցառաջ գնա՝ զի դու ծեր ես և գիրս մաշեալ է, որ լաւ տեսանես. և գնաց այլ յառաջ. և եհան Ջորին կիցս և մեծաւ զօրութեամբ եհար զնախատ Գայլուն, և ջախջախեաց զգլուխն և զիսմծէքն։ Եւ Գայլն երթայր և ողորմագին լայր։ Եւ ասէ Աղուէսն Գայլուն, Թէ Ե՛կ, եղբայր, մի տող այլ մանրը գիր կայ, զայն այլ կարդա։ Եւ ասէ Գայլն, Թէ Ես զդիրս ինչ գիտէի. մեք յազգէ յազգ մաս գործ մեագործի որդի ենք. ապա ով գիւր արուեստն թողու և այլ առնէ, նա իւր հոգն պիտի քան զիմն լինի։ — Ցուցանէ առակս՝ Թէ զայն արուեստն որ ոչ գիտէ և 'ի վարպետէ չէ ուսեալ մարդ, նա զայն պարտ չէ որ առնէ, Թէ չէ՝ խամծէքն քան զգայլուն պիտի լինի։

ՈՍԿԵՓՈՐԻԿ

digitised by A.R.A.R.@